



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 8 ՄԱՅԻՍ, 2017

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 145

ՆԵՐՐՈՂ ՏԻՐՈՋ

Պիտի փառաբանեմ քեզ, իմ Թագաւոր Աստուածս,  
քու անունդ պիտի օրհնաբանեմ յաւիտեանէ յաւիտեան:  
Մեծ է Տէրը, եւ ամէն օրհներգութեան արժանի, անչափելի է անոր մեծութիւնը:  
Բարեգութ եւ ողորմած է Տէրը, համբերաբար եւ սիրով լեցուն:  
Բոլորին հանդէպ բարեհաճ է Տէրը,  
իր գթութիւնը կը տարածէ իր բոլոր արարածներուն վրայ:  
Տէրը հաւաքարիմ է իր բոլոր խոստումներուն մէջ,  
նախանձախնդիր է իր բոլոր գործերուն մէջ:  
Տէրը նեցուկ կը կանգնի անոնց՝ որոնք իյնալու վրայ են,  
եւ ոտքի կը կանգնէ բոլոր գլորածները:  
Բոլորին աչքերը քեզի յառած են,  
եւ դուն իւրաքանչիւրին ուտելիքը կու տաս իր արեւին:  
Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն,  
բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:  
Անիկա իրմէ ակնածողներուն փափաքը կը կատարէ,  
անոնց աղօթքը կը լսէ եւ կը փրկէ զանոնք:  
Տէրը կը պահէ բոլոր զինք սիրողները,  
մինչ կորուստի կը մարնէ բոլոր ամբարիշտները:  
Ես օրհներգութիւն պիտի ընծայեմ Տիրոջ,  
եւ թող ամէն արարած օրհնաբանէ անոր սուրբ անունը  
յաւիտեանէ յաւիտեան: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիանալաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԸ



ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ  
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

5:14-15

\*\*\*\*\*

ԱՂՕԹԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ (5:14-15)

Ասկէ առաջ ալ Յակոբոս Առաքեալ խօսեցաւ բաներ խնդրելու մասին երբ կ'ըսէ. «Շարք մը բաներու կը ցանկանք, բայց չէք կրնար ունենալ, ուստի կը սպաննէք: Կը նախանձիք, բայց չէք կրնար ձեռք անցնել, եւ ահա կը կռուիք ու կը պայքարիք: Ձեր ուզածը չէք ունենար, որովհետեւ Աստուծմէ չէք խնդրեր. կամ կը խնդրէք եւ Աստուած չի փար, որովհետեւ գէշ նպատակով կը խնդրէք, ձեր հաճոյքներուն ծառայեցնելու համար» (Յակոբոս 4:2-3): Իսկ նամակը կը փակէ յիշեցնելով, ու մանաւանդ հաւաքացեալները այդ ուղղութեամբ առաջնորդելու, դէպի աղօթք:

«Նեղութեան մէջ ես՝ աղօթէ»: «Ուրախ փրամադրութեամբ մէջ ես՝ գոհաբանական երգ երգէ»: «Մէկը հիւանդացան՝ թող կանչէ եկեղեցոյ երէցները, որպէսզի իր վրայ աղօթեն եւ իւղով օծեն, Տիրոջ անունով»: Այս բոլորը ցոյց կու տան, թէ՛ իբրեւ անհապ, եւ թէ՛ իբրեւ եկեղեցի աղօթքի փրամադրութիւն, աղօթքի պարաստութիւն ունենալու: Որովհետեւ, Յակոբոս Առաքեալ կ'ըսէ. «Հաւաքով կատարուած աղօթքը պիտի բժշկէ հիւանդը» (15 հմբ): Իսկ եթէ մեղքեր գործած է՝ պիտի ներէ անոր: Անոր համար ալ Չարը կը սարսափի աղօթքէն, մանաւանդ հաւաքով եղած աղօթքէն, անոր համար ալ կ'ուզէ որ Աստուծոյ ժողովուրդը, Աստուծոյ ընտրուած մարդը չաղօթէ: Այդ իսկ պարճառով Առաքեալը կը սորվեցնէ, կը քաջալերէ, որ հաւաքացեալները ինչպիսի պարագայ մէջ ալ ըլլան, աղօթեն: Արդեօք, այսօր այս երեւոյթը, որքանով գործնական է, կամ որքանով անոր կը հաւաքանք: Մանաւանդ, երբ այսօր բժշկութիւնը այնքան զարգացում արձանագրած է, այնպիսի գործիքներ կան, որոնք կը սրուգեն հիւանդութեան փեսակը, եւ ըսք այնմ կը դիմեն յարուկ դեղերու: Եւ ինչու չէ նաեւ այս բոլորի երին փեսանել Աստուծոյ կողմէ փրուած որպէս բարիքներ, մարդու օգուտին համար: Բայց զգուշ, որ այնպէս չառնենք, որ անցեալի այս հապուածը եւ այսօրուան զարգացումը իրարամերժ վիճակներ ըլլան:

Վարահաբար, Յակոբոս Առաքեալ երբ այս փողերը կը գրէր, գիտէր ինչ ըսել կ'ուզէ, նոյնիսկ հաւաքացեալները որ այս փողերը կը կարդային գիտէին Առաքեալին միտքը: Մեր պարագային որքան զգուշ պէտք է ըլլանք որ մենք եւս ճիշդ ձեւով հասկնանք հապուածը, Սուրբ Հոգիի առաջնորդութեամբ եւ իմաստութեամբ, որպէսզի կարենանք ճիշդ ուղղի վրայ ըլլալ: Անոր համար ալ արժէ հապուածին ամբողջ շրջագիծը նկարի ունենալ: Ո՛վքեր են դերակատարները: Եկեղեցին, եկեղեցոյ երէցները: Այս ըսելով կը նշանակէ, Յակոբոս Առաքեալ կ'ուզէ որ իւրաքանչիւր հաւաքացեալ մասնակցի դառնայ Եկեղեցոյ կեանքին ու անոր գործունէութեան, որպէս մաս եւ բաժին հաւաքի համայնքին: Այս երեւոյթը արդէն բուն իսկ նպատակն էր Աստուծոյ, որուն կ'անդրադառնայ ամբողջ Աստուածաշունչը, որ Աստուած միայն անհապը չփրկեց, այլ՝ ժողովուրդ: Ուրեմն, երբ նեղութեան մէջ ես, ուրախ փրամադրութեան մէջ ես, հիւանդ ես, համայնքի կեանքին մէջ որպէս, եւ ոչ անհապական: Սա ցոյց կու տայ, ուրեմն անհապը առանձին չէ, որովհետեւ Աստուծոյ ժողովուրդին մաս կը կազմէ: Սուրբ Հոգիով իրարու կապուած են մարմինի անդամները: Ուրիշ ո՛վ դերակատար է: Եկեղեցոյ երէցը: Երէցներ, որոնք Քրիստոսի առաջնորդութեան փակ են, պարասխանապու են ժողովուրդին համար, եւ ոչ թէ ժողովուրդին: Անոր համար ալ Երբայեցոց նամակին հեղինակը կոչ կ'ուղղէ ըսելով. «Մտիկ ըրէք ձեր առաջնորդներուն խօսքը, որովհետեւ անոնք անքուն կը հսկեն ձեր հոգիներուն համար, գիտնալով՝ որ հաշիւ պիտի փան ձեզի համար. եւ հնազանդ եղէք անոնց, որպէսզի ուրախութեամբ կատարեն իրենց պաշտօնը եւ ոչ թէ հառաչելով, որովհետեւ ստիկա ձեր օգուտին համար չ'ըլլար» (Եբր 13:17):

Ուրիշ ո՛վ դերակատար է: Հիւանդը: Ընդհանրապէս, այսպէղ հիւանդ բառը, իր յունարէն փարբերակ կը նշանակէ փկար, ոչ միայն կապուած ֆիզիքական վիճակին, այլ նաեւ մտային, ու հոգեւոր: Ահա այս վիճակներու մէջ, երթալու եկեղեցոյ երէցին եւ խնդրելու իր աղօթէ իրեն համար: Հապուածը ցոյց կու տայ, թէ հիւանդ անձը ինքն է աղօթք խնդրողը: Միւս կողմէ, երբ երէցներ գան, անոր մօտ աղօթելու եւ իւղով օծելու: Այս պարագային այնպէս կը թուի թէ այդ իւղը կախարդական բնոյթ ունեցող յարկութիւն մըն է, որ հազիւ օծեն պիտի առողջանայ: Բայց այդպէս չէ, այլ անոր մէջ Աստուծոյ ներկայութիւնը, որպէս խորհրդանիշ Սուրբ Հոգիի ներկայութեան: Ի վերջոյ, խնդրոյ առարկան աղօթքն է եւ ոչ թէ իւղը ինք: Այս հապուածը կու գայ մեզի ցոյց տալու կապը Քրիստոսի մարմնի անդամներուն միջեւ: Յոյց կու տայ հասուն եւ հաւաքով լեցուն երէցները, որոնք Աստուծոյ առաջնորդութեամբ, պարասխանապուութեան գիտակցութեամբ: Առաւել եւս, ցոյց կու տայ խոնարհ եւ հաւաքով լեցուն աղօթքը: